ԿՄ-13341

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
« 29 » 09 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0173-23

Ձեռնարկողը՝ ***«Ռենովեյշն փրոջեքթ մենեջմենթ Քամփնի» ՍՊԸ***
Քաղաք Երևան, Սևանի 86/2

Գործունեությունը՝ ***Կենտրոն վարչական շրջանի Նորագյուղ թաղամասի 235/3 հասցեում բազմաբնակարան բնակելի տների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 6 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0173-23

< 29 > 09 **2023թ.**

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Նորագյուղ թաղամասի 235/3 հասցեում բազմաբնակարան բնակելի տների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Ռենովեյշն Փրոջեքթ Մենեջմենթ Քամփնի» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

Ներածական մաս. Բազմաբնակարան բնակելի տների կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նորագյուղ թաղամաս 235/3 հասցեում: Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից լուծումներով բազմաբնակարան բնակելի համալիր:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 6480.3 քմ:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախագծված է բազմաբնակարան բնակելի տների նախագիծ՝ 3 լիարժեք և 1 նահանջ հարկերով: Հիմք՝ 06.07.2023թ տրամադրված 01/18-07/2-01-71447-383 նախագծման թույլտվությունը:

Համալիրը կազմված է չորս մասնաշենքերից, որոնք ունեն 4 վերգետնյա /բնակելի/ և 2 ստորգետնյա /ավտոկայանատեղի/ հարկեր:

Մոտակա բնակելի տները գտնվում են 15-65մ հեռավորությամբ: Տարածքում առկա է քանդման ենթակա 96քմ և 4.9քմ մակերեսով օժանդակ շինություններ, 1.7 քմ պարիսպ, 67.5քմ մակերեսով ինքնակամ շինություն:

Տրանսպորտային պայմաններն ապահովված են Նորագյուղի փողոցից:

Համալիրի ստորին երկհարկանի հատվածում տեղակայված են 84 մեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղին, տրանսֆորմատորային ենթակայանն ու պոմպակայանը: Հրդեհաշիջման համակարգերն ապահովվելու են ջրով, որը մղվելու է 2 ստորգետնյա ջրամբարներից: Աստիճանավանդակների և վերելակների սրահների դռները նախատեսված են հակահրդեհային, ինքնափակվող իսկ ստորգետնյա հատվածը հարմարեցված է որպես թաքստոց օգտագործելու համար և ունի 2 մուտք դրսից:

Տանիքները հարթ են, ջրահեռացումը՝ կազմակերպված: Բակում նախատեսվում է ջրավազան:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար նախատեսվել են թեքահարթակներ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ.

- Տարածքի ընդհանուր մակերես 6480.3 քմ-100%:
- 0 նիշում շենքի մակերես - 2124 քմ-33%,
- ճանապարհներ,պարկինգներ, ասֆալտապատ մակերեսներ, սալվածքներ-1751քմ-27%,
- կանաչապատում - 2605 քմ-40%,
- բնակարանների քանակ - 80 հատ,
- Ստորգետնյա -1 և -2 յուրաքանչյուր հարկի մակերեսը- 2569քմ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել նախատեսելով կաթիլային ոռոգման ցանց: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, իրականացնելով ծառատունկ և սիզամարգի ցանքս, տկվելու են թփեր: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 2605 քմ:

Ավտոկայանատեղիներում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ:

Նախատեսվող գործունեության շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 36,0 ամիս: Շինարարությունն իրականացվելու է կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, դրանք վարձակալվելու են այլ կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը առաքվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում:

Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող կենցաղային աղբը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, իսկ շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ Էրեբունի վարչական շրջանի նուբարաշենի խճուղի 4 հասցեում գտնվող տարածք:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Բազմաբնակարան բնակելի տների ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի, միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի ցանցին: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել, Մաշտոցի փողոցով անցնող D=400մմ ջրատարից, կոյուղին՝ Իսակովի պողոտայով անցնող d=800մմ կոյուղատարից:

Շինարարության փուլում ջրցանման համար ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում շենքի էլեկտրամատակարարումը 538 կՎԱ ծախսով հնարավոր կլինի իրականացնել՝ կառուցելով նոր ենթակայան, որի համար կառուցապատողը կհատկացնի 84քմ տարածք:

Հասարակական նշանակության կենտրոնի գազաֆիկացումը P=0.3 ՄՊա ճնշման և Q=291 խմ/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել ԳԲԿ Երևան-4 սնող սնող Dպ-500 կողմնատար գազատարից:

Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 14400խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր: Հանվող 11600խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ: Բնութագրվող տարածքը չի գտնվում պահպանվող գոտում, տարածքում և տարածքի մերձակայքում բացակայում են պատմամշակութային հուշարձանները:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան:
- Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER - ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ - SNCO - РА ЕРЕВАН - RA YEREVAN - 02543163 - ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

- Շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով:
- Սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա:
- Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:
- Հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում:
- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին:
-Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- Պարբերաբար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները:

Բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.
- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:
-Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
- Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
- Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 1960000 դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանում, որոնց ընթացքում տեղական

ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեն: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Անհրաժեշտ է հայտում նշված հողամասի առնվազն 40.%-ն ապահովել որպես կանաչապատման տարածք:

Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ քաղաքապետարանի հետ համաձայնեցված:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու լիցքավորումն անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չպահեստավորել:

- Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

-Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակն անհրաժեշտ է ցանկապատել 2.5 մ բարձրությամբ թիթեղով, մարդկանց անցման հատվածներում: Անվտանգության նկատառումներով պայմանավորված նախատեսել թիթեղյա ծածկոց:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ռենովեյշն Փրոջեքթ Մենեջմենթ Քամփնի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Նորագյուղ թաղամասի 235/3 հասցեում բազմաբնակարան

բնակելի տների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան